<u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</u>

Ք. ԵՐԵՎԱՆ, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՔՍԱՆԻՆ                                                  <u>20.12.2013թ.</u>
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆԻ

*«ԿՈՂՄ-1»* ***<u>«ՏՐԱՆԶԻՍՏՈՐ-ԿԵՐՄԵՏ» ՓԲԸ</u>***/վկայական՝ 03Ա064479/, որի անունից 20.12.2013թ լիազորագրով հանդես է գալիս <u>ԱՐՄԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԸ</u>, (ծնված՝ 04.03.1942թ., անձնագիր՝ AM 0573760, տրված՝ 21.12.2011թ, 005-ի կողմից, հաշվառված՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 8/1 շենք, բն. 36) և

*«ԿՈՂՄ-2»* ***<u>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն</u>***, որի անունից 19.12.2013թ թիվ 17605/18 լիազորագրով հանդես է գալիս ***<u>ԱՐԹՈՒՐ ԱՐՇԱՄԻ ԱԲԱՄՅԱՆԸ</u>***/ծնված 15.04.1961թ, անձ. AE 0235104, տրված 10.03.1999թ, երկարացված է մինչև 10.03.2014թ., 005-ի կողմից, հաշվառված /ք. Երևան, Ն. Նորքի 9-րդ զանգված, 38 շենք, բն 22/,

<u>ԿՆՔԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ</u>

1. ***<u>«ՏՐԱՆԶԻՍՏՈՐ-ԿԵՐՄԵՏ» ՓԲԸ</u>***-ն և ***<u>ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՆ</u>***, այսուհետև «ԿՈՂՄԵՐ», որոշեցին «ԿԵՆՏՐՈՆ» նոտարական տարածքի նոտար՝ ***<u>ՀԱՅԿՈՒՀԻ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ</u>*** կողմից <u>31.05.2013թ.</u> վավերացված՝ հ. 960 անշարժ գույքի վարձակալության պայմանագրում կատարել կետի փոփոխում.

***5.1. կետը փոփոխել և շարադրել հետևյալ կերպ՝***

Վարձակալության պայմանագրի ժամկետը երկարացնել մինչև՝ 31.12.2014թ-ը /երկու հազար տասնչորս թվականի դեկտեմբերի երեսունմեկը/:

*Պայմանագրում ավելացնել* ***5.4.*** *կետը հետևյալ խմբագրությամբ*

***5.4.*** *Հաջորդ տարիների ընթացքում պայմանագիրը կգործի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:*

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից:

3. Համաձայնագրի հետ կապված ծախսերը կատարվում են «ԿՈՂՄ-2» -ի կողմից:

4. Սույն համաձայնագիրը կողմերի ցանկությամբ կնքված է հայերեն լեզվով, 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Համաձայնագրի բովանդակությունը կողմերի կողմից ընթերցվեց :

6. Բովանդակությունը բավարարում է կողմերի պահանջներին:

*ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

| | |
|---|---|
| *«ԿՈՂՄ-1»* | *«ԿՈՂՄ-2»* |
| ***<u>«ՏՐԱՆԶԻՍՏՈՐ-ԿԵՐՄԵՏ» ՓԲԸ կ/ա</u>*** | ***<u>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն կ/ա</u>*** |
| <u>ԱՐՄԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ</u> | *<u>ԱՐԹՈՒՐ ԱՐՇԱՄԻ ԱԲԱՄՅԱՆ</u>* |

Երկու հազար տասներեք թվականի դեկտեմբերի քսանին, սույն համաձայնագիրը պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին վավերացվել է «ԿԵՆՏՐՈՆ» նոտարական տարածքի նոտար՝ ***<u>ՀԱՅԿՈՒՀԻ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ</u>*** կողմից: Համաձայնագիրը պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին կողմերըստորագրել են իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը ստուգված է, նրանց գործունակությունը՝ պարզված, ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են:

*Գրանցված է սեղանամատյանում՝ 2718 ով*
*Գանձված է պետ.տուրք և ծառայության վճար,*
*համաձայն Հայաստանի Հանրապետության*
*,, Պետական տուրքի մասին,,*
*և ,,Նոտարիատի մասին,, օրենքների*

*ՆՈՏԱՐ՝*

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

**31.05.2013թ. կնքված և սեղանամատյանում թիվ 960 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ՀՀ քաղաք Երևան — Երկու հազար տասնչորս թվականի փետրվարի 7

<<Տրանզիստոր-կերմետ>> ՓԲԸ-ն, ի դեմս Ա.Շաքոյանի այսուհետ՝ <<ՎԱՐՁԱՏՈՒ>>, մ կողմից և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտներ կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Գևորգյանի, այսուհետ՝ <<ՎԱՐՁԱԿԱԼ>>, մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելո 31.05.2013թ. կնքված և սեղանամատյանում թիվ 960 համարով գրանցված անշարժ գույք վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 1 համաձայնագրի 1-ի կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը ՝ համաձայն հավելված 1-ի:
2. 31.05.2013թ. կնքված և սեղանամատյանում թիվ 960 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:
3. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու/2/ հավասարազոր օրինակից և տրվում են կողմերին:
4. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
5. Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

ք. Երևան, Մ.Խորենացու-7
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02591206

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Գևորգյան

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>

<<Տրանզիստոր-Կերմետ>> ՓԲԸ
Հասցե ք. Երևան, Հ.Հակոբյան 3
Հ/Հ 247010001276
<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 00000962

Տնօրեն՝

Ա.Շաքոյան

Հավելված 1
31.05.2013թ. կնքված
սեղանմատյանում թիվ 960 համարով գրանցված պայմանագրի
թիվ 2 փոփոխությամբ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ. արտաբյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Անշարժ գույքի վարձակալություն | 4216 | 360,0 | 720,0 | 1080,0 | 1440,0 | 1800,0 | 2160,0 | 2520,0 | 2880,0 | 3240,0 | 3600,0 | 4320,0 | 4320,0 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

ք. Երևան, Մ.Խորենացու-7
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02591206

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Գևորգյան

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>

<<Տրանզիստոր-Կերմետ>> ՓԲԸ
Հասցե ք. Երևան, Հ.Հակոբյան 3
Հ/Հ 247010001276
<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 00000962

Տնօրեն՝

Ա.Շարոյան